

Արձանագրություն №4/2016-2017

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2017թ. հունվարի 26-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 64-ը (վաթսունչորսը):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում** (զեկ. գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Ն. Պետրոսյան, Ա. Ա. Սահակյան):
2. **ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին** (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
3. **ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին** (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
4. **Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2015-2016 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին** (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
5. **ԵՊՀ միջազգայնացման հայեցակարգի հաստատում** (զեկ. միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Ա. Մարգարով):
6. **Գիտական զեկուցում. «Իսլամական պետությունը և ռազմաքաղաքական վերջին զարգացումները Մերձավոր Արևելքում»** (զեկ. Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի գիտաշխատող Սարգիս Գրիգորյան):

7. Ընթացիկ հարցեր

7.1 ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն ստեղծելու առաջարկությամբ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** – **Պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու մասին:** Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի անդամ Ս. Վ. Ղաչիկյանը ներկայացրեցին պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդներն էին.

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Աշխատանքային վայրը, պաշտոնը |
|----|-----------------------------------|--|
| 1. | Չուգասզյան Լևոն Բաբկենի | Հայ արվեստի տեսության և պատմության ամբիոնի վարիչ |
| 2. | Գևորգյան Հասմիկ Էդուարդի | Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ |

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Աշխատանքային վայրը, պաշտոնը |
|----|-----------------------------------|---|
| 1. | Մխիթարյան Սամսոն Արարատի | Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ |
| 2. | Բուռնազյան Իրինա Սերգեյի | Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ |
| 3. | Մարգարյան Մարիանա Սամվելի | Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ |
| 4. | Գևորգյան Մարինե Գրիգորի | Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ |
| 5. | Պետրոսյան Գոհար Գրիգորի | Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի ասիստենտ |
| 6. | Ափոյան Սվետլանա Հակոբի | Ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի ասիստենտ |
| 7. | Մուրադյան Վահագն Մոսի | Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի ասիստենտ |
| 8. | Բաղդասարյան Քրիստինե Յուրիի | Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ |

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Թոչունյան Արմեն (նախագահ)
2. Մովսիսյան Յուրի
3. Մուրադյան Սամվել
4. Մխիթարյան Նուշիկ
5. Սահակյան Հարութ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 64 անդամներից 62-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Թոչունյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

| h/h | Ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | անվավեր |
|-----|-----------------------------|------|-----|---------|
| 1. | Չուգասյան Լևոն Բաբկենի | 58 | 4 | 0 |
| 2. | Գևորգյան Հասմիկ Էդուարդի | 60 | 1 | 1 |
| 3. | Մխիթարյան Սամսոն Արարատի | 62 | 0 | 0 |
| 4. | Բուռնազյան Իրինա Մերգելի | 61 | 0 | 1 |
| 5. | Սարգսյան Մարիանա Սամվելի | 61 | 1 | 0 |
| 6. | Գևորգյան Մարինե Գրիգորի | 55 | 7 | 0 |
| 7. | Պետրոսյան Գոհար Գրիգորի | 62 | 0 | 0 |
| 8. | Ափոյան Սվետլանա Հակոբի | 58 | 3 | 1 |
| 9. | Մուրադյան Վահագն Սոսի | 61 | 1 | 0 |
| 10. | Բաղդասարյան Քրիստինե Յուրիի | 61 | 1 | 0 |

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

1.2 Վերոնշյալ հավակնորդներին շնորհել պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3 Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար:

2. Լսեցին. – ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգում և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ նշված կանոնակարգերում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հիմնականում բխում են այդ հարցումներն այլևս առցանց իրականացնելու ձևից: Այսպիսով ամրագրվում է, որ հարցումներն անց են կացվում առցանց եղանակով, յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանից հետո սահմանված ժամանակահատվածներում: Ինչ վերաբերում է շրջանավարտների հարցումներին, ապա դրանք իրականացվում են ավարտական կուրսերում՝ փետրվար, հունիս և հուլիս ամիսներին:

Արտահայտվեցին. – Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանն առաջարկեց ուսանողական հարցման կանոնակարգի 2.4 կետից հանել այն հատվածը, որ վերաբերում է դասախոսի գնահատման արդյունքների հաշվարկման միջին թվաբանական և միջին քառակուսային շեղում հասկացությունների բացատրությանը, քանզի այդ բացատրությունն արդեն իսկ տրվում է տողատակում: Ա. Գրիգորյանն ընդունելի համարեց առաջարկը:

Որոշեցին. – Հաստատել Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման և Երևանի պետական համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգերը՝ ըստ ներկայացված նախագծերի:

3. Լսեցին. – Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2015-2016 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, մասնավորապես, նշեց, որ նախորդ ուստարվա համեմատ 2015-16 ուստարում հարցումներին ուսանողների մասնակցության ցուցանիշը նվազել է, 2014-

15 ուստարվա 69.7 տոկոսի դիմաց 2015-16 ուստարում դառնալով 67.2 տոկոս: Մասնակցության ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետը՝ 72.4 տոկոս, ամենացածրը՝ իրավագիտության ֆակուլտետը՝ 61.9 տոկոս: Ըստ ֆակուլտետների հարցման միջինացված արդյունքների՝ դասավանդման որակի գնահատման ամենաբարձր ցուցանիշներն արձանագրել են ռադիոֆիզիկայի և արևելագիտության ֆակուլտետները՝ 4.69 միավոր, ամենացածրը՝ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը՝ 4.37 միավոր: Բանախոսը ներկայացրեց նաև դեկանի և դեկանի տեղակալների գնահատման արդյունքներն ըստ ֆակուլտետների (ամենաբարձր ցուցանիշն իրավագիտության ֆակուլտետում է՝ 4.77 միավորով, ամենացածրը՝ սոցիոլոգիայի ֆակուլտետում՝ 3.9 միավորով): Ա. Գրիգորյանը ներկայացրեց նաև հարցման տեղեկատվական հատվածի արդյունքները: Ըստ այդմ, «գնահատում դրամի դիմաց» հարցմանը հարցվողների դրական պատասխանի ցուցանիշը նախորդ ուստարվա համեմատ նվազել է՝ 2 տոկոսից իջնելով 1.6 տոկոսի: Նշված հարցին դրական պատասխանի ամենացածր ցուցանիշը գրանցվել է փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում՝ 0.5 տոկոս, և ամենաբարձր ցուցանիշը՝ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում՝ 4.1 տոկոս: «Գնահատում հարկադրված մասնավոր պարապմունքների շնորհիվ» հարցման դրական պատասխանի ցուցանիշը ևս նվազել է 2014-15 ուստարվա համեմատ՝ 2.7 տոկոսից իջնելով 2.4 տոկոսի: Նշված ֆակուլտետները այս հարցման պարագայում ևս գրանցել են համապատասխանաբար ամենացածր (0.4%) և ամենաբարձր (4.7%) ցուցանիշները: Կուրատորների աշխատանքի գնահատման վերաբերյալ հարցի դրական պատասխանի ցուցանիշը նախորդ ուստարվա համեմատ աճել է. այս ուստարվա հարցվածների 49.7 տոկոսն են դրական գնահատել կուրատորների աշխատանքը՝ նախորդ ուստարվա 41.4 տոկոսի դիմաց:

Արտահայտվեցին. – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը հայտնեց, որ ուսանողական հարցումների թերթիկներում ուսանողները հաճախ են արժարծում ուսման բարձր վարձերի խնդիրը: Բակալավրի ուսանողներին մանկավարժի որակավորում տալով պայմանավորված, լրացուցիչ դասընթացների մասնակցության դեպքում վարձավճարներն ավելի են թանկանում. ըստ Ավագյանի որոշ ուսանողներ այս խնդրի շուրջ տարակուսանք են հայտնում՝ նշելով, որ այլ բուհերում մանկավարժի որակավորում նախատեսող կրթական ծրագրերի համար անհամեմատ քիչ են վճարում: Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ մանկավարժի որակավորման համար նախատեսված դասընթացների մեկ կրեդիտի դիմաց 5.000 դրամ գումար սահմանելը ելնում է դասընթացների կազմակերպման կարիքների նվազագույն, նույնիսկ ինքնարժեքից ցածր գնահատումից, իսկ նշված բուհերում նշված վարձավճարի դիմաց միգուցե ապահովվում է մանկավարժի որակավորում, բայց ԵՊՀ-ն տալիս է և հայ բանասերի, և մանկավարժի որակավորում:

Որոշեցին. – 2015-16 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

- 4. Լսեցին.** - ԵՊՀ միջազգայնացման հայեցակարգի նախագիծը հաստատելու մասին: Միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարովը, ի մասնավորի, նշեց, որ քննարկման դրվող նախագիծը բխում է ԵՊՀ զարգացման 2016-2020

ռազմավարական ծրագրի պահանջներից, որտեղ միջազգայնացումը կարևոր նպատակ է հռչակված: Ա. Մարգարովը ներկայացրեց հայեցակարգի բաղադրիչները՝ բուհերի միջազգայնացման հասկացությունն ու դրա կարևորությունը, ԵՊՀ միջազգայնացման ոլորտները, խնդիրները, ակնկալվող օգուտները և այլն:

Արտահայտվողներ չեղան:

Որոշեցին. - Հաստատել ԵՊՀ միջազգայնացման հայեցակարգի նախագիծը:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը առաջարկեց մինչև գիտական զեկուցմանն անցնելը լսել ընթացիկ հարցը և ամբիոնի մոտ հրավիրեց աստվածաբանության ֆակուլտետի դեկան Ա. Եպս. Ժամկոչյանին:

5. Լսեցին. – ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն ստեղծելու առաջարկությամբ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին: Ա. Եպս. Ժամկոչյանը, մասնավորապես, նշեց, որ ժամանակակից աշխարհում արդիական է դարձել կրոնագիտության հետ կապված խնդիրների հետազոտությունը: Այդ համատեքստում ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետը նախատեսում է ստեղծել կառուցվածքային նոր ստորաբաժանում՝ միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն, որը ուսումնասիրություններ կիրականցնի միջկրոնագիտական ոլորտում (սոցիոլոգիա և կրոն, կրոնի հոգեբանություն, կրոնի հնագիտություն և այլն): Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ կենտրոնի տարածքի բարեկարգման համար ֆինանսները խոստացել է տրամադրել արտասահմանյան դոնոր կազմակերպությունը, իսկ ընդհանուր գործունեությունը ֆինանսավորելու համար դիմելու են ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի դրամաշնորհի:

Արտահայտվեցին. – Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը հետաքրքրվեց, մշակված է կենտրոնի կանոնադրությունը: Ա. Ժամկոչյանը պատասխանեց, որ կանոնադրության մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են և ավարտվելուն պես կներկայացնեն ԵՊՀ գիտխորհրդի՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողով:

Որոշեցին. – Առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում ստեղծելու միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն:

6. Լսեցին. – **Գիտական զեկուցում.** «Իսլամական պետությունը և ռազմաքաղաքական վերջին զարգացումները Մերձավոր Արևելքում»: Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի գիտաշխատող Ս. Գրիգորյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ Իսլամական պետություն ահաբեկչական կազմակերպության ստեղծման ու զարգացման պատմությանը՝ 2011թ. սկսված «արաբական գարնան» դերը մեծապես կարևորելով այդ կազմակերպության գործունեության աշխուժացման ու ծավալման հարցում: Ս. Գրիգորյանը հանգամանակից կանգ առավ Իսլամական պետության և Ալքաիդայի միջև հարաբերություններին, ԻՊ-ի կողմից շիադավան մահմեդականներին թիրախավորելու խնդրին: ԻՊ-ի հաջողության գրավականների շարքում Ս. Գրիգորյանն առանձնացրեց այն աննախադեպ իրողությունը, երբ ահաբեկչական պետությունը խնդիրներ է դնում վերահսկել կոնկրետ տարածքներ, ըստ բանախոսի

այսօրվա դրությամբ Սիրիայում և Իրաքում ԻՊ-ը վերահսկում է մոտ 120.000 քառակուսի կմ տարածք: Մյուս կարևոր հանգամանքը Ս. Գրիգորյանը համարեց նավթահորերի վերահսկողության միջոցով ֆինանսական ահռելի հնարավորություններ ունենալը: Ս. Գրիգորյանը հանգամանալից ներկայացրեց նաև ԻՊ-ի կողմից կիրառվող ռազմավարական-մարտավարական նորարարությունները.

- Միաժամանակյա բազմաքանակ պայթյուններ, որոնք պետության պարալիզացման տպավորություն են ստեղծում հասարակության շրջանում,
- հարձակումներ բանտերի պահապանների վրա և բանտարկյալների ազատում և ներգրավում իրենց շարքերը,
- հարձակումներ ուժային կառույցների վրա,
- մահապարտ ահաբեկիչների ինքնասպան պայթյուններ և այլն:

Ս. Գրիգորյանը ԻՊ-ի գործունեության ամենավտանգավոր միտումներից համարեց.

- Կազմակերպության ցանցայնացումը,
- Ջիհադականների՝ ռազմական փորձառության ձեռքբերումը,
- ԻՊ-ի քարոզչական գործունեությանը լայն դրական արձագանքները աշխարհի տարբեր երկրների մահմեդականների շրջանում և այլն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

30.01.2017թ.